

ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ  
ԽԱՂԱՔԱՐՏՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ\*

Սիրանուշ Մելիքյան

Բանալի բառեր՝ հակամարտություն, հոգևոր առաջնորդ, կրոնական գործոն, հանրային մքնողորտ, խաղաղ գոյություն, հոգևոր անվտանգություն, միջազգային հանրություն:

Միջէրնիկ հակամարտությունները պատմականորեն արմատավորվող և երկար ընթացք ունեցող քաղաքական ու պատմական իրադարձություններ են, առանձնանում են իրենց բարդությամբ ու սուբյեկտների լայն ընդգրկունակությամբ, դիմամիկ տրանսֆորմացիաներով ու ռազմական բախումներով։ Դրա ակնհայտ օրինակն է Արցախյան հակամարտությունը, որը ոչ միայն հայ-ադրբեջանական, այլև տարածաշրջանային ու համաշխարհային ակադեմիական շրջանակներում լուրջ գիտական քննարկումների առարկա է դարձել։ Այսօր աշխարհում էթնոքաղաքական հակամարտություններում առանցքային տեղ է սկսել զբաղեցնել կրոնական գործոնը։ Ուստի մի փոքր անդրադարձնանը կրոնական գործոնի՝ Արցախյան հակամարտության հետ առնչումներին։

Արդի ռազմաքաղաքական զարգացումների հենքում, որպես կարևորագույն գործոններից մեկը, ընկած է քաղաքակրթական բախումը։ Հայտնի է նաև, որ հոգևոր-կրոնական բաղադրիչը ցանկացած քաղաքակրթության զինավոր հատկանիշներից է։ Պատահական չէ, որ փորձագիտական հանրությունում գերակայում է այն թեզը, որ 21-րդ դարը ոչ միայն էթնիկական, այլև գուտ դավանաբանական հակամարտությունների ժամանակաշրջան է։ Նման մոտեցումը հիմնավորված է արդեն իսկ գոյություն ունեցող իրողություններով։ Օրինակ՝ Մերձավոր և Միջին Արևելքում ընթացող զարգացումներում կրոնական գործոնն ավելի քան կարևոր է կատարում [1]։

1980-ական թթ. Աղրբեջանում ներքին իշխանության պահպանման, ինչպես նաև արտաքին, անվտանգային մի շարք խնդիրներ պատճառ են հանդիսացել իսլամական գործոնի քաղաքականացման և վերահիմնաստավորման համար[2]։ 1980-ականներին սրված Արցախյան հիմնախնդիրը և հայ-ադրբեջանական ռազմական բախումը արագացրին քաղաքական իսլամի մուտքը Աղրբեջան։ Անհերքելի փաստ է, որ Արցախյան հիմնախնդիրն արմատապես խարսխված է ոչ թե կրոնական, այլ ավելի շատ էթնիկական, ազգային, քաղաքական, պատմական, իրավական հենքերի վրա։ Սեփական ինքնորոշման ու պատմական հայրենիքի համար պայքարող հայության համար Արցախյան հակամարտության մեջ կենսական չէր, թե որ կրոնի հետևորդներ են ադրբեջանցիները, մինչեւ Աղրբեջանում պատկերն այլ էր։ Հակամարտության տարրեր փուլերում՝ հատկապես 1990-ականների ռազմական բախումների ժամանակ Աղրբեջանն ամեն բան անում էր իսլամական աշխարհին Արցախյան պատերազմի մեջ ներգրավվելու համար։ Այս երկիրն իսլամական կրոնը տեսնում էր որպես կապող ողակ մահմեդական երկրների հետ՝ Արցախյան հիմնախնդիրն ադրբեջանանպաստ լուծում

\* Հոդվածն ընդունվել է 30.01.2018։

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը։

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

տալու նպատակով: Այսպիսով, ի տարբերություն մեր պետական կրոնի՝ քրիստոնեության, իզամն աղրբեջանական ռազմավարության մեջ հաճախ վերահմատավորվում է և դառնում քաղաքական խաղաքարտ:

Ի տարբերություն Աղրբեջանի՝ Հայաստանի համար այս հականարտության մեջ կրոնը միայն մի դեր ու նշանակություն կարող էր ունենալ՝ խնդիրը խաղաղ ձանապարհով լուծելու: Տարածաշրջանային համրային դիսկուրսում լայն քննարկումների առարկա դարձավ 2017 թ. սեպտեմբերի 8-ին Մոսկվայում կայանալիք Հայաստանի և Աղրբեջանի հոգևոր առաջնորդների հանդիպումը՝ Արցախյան հիմնախնդիրը քննարկելու նպատակով: հանդիպումը կազմակերպվել էր Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի միջնորդությամբ: [3]

Քաղաքական ենթատեքսում կամ էլ Արցախյան հիմնահարցին վերաբերվող քննարկումներում հոգևոր առաջնորդների դիսկուրսն ու հանդիպումները նոր մշակույթ չեն, ուստի կատարենք մի փոքր պատմական ակնարկ վերոնշյալը հասկանալու համար: Ողջամիտ չի լինի կարծել, որ հոգևոր հիմքերի վրա չխարսխված այս հակամարտությունը հոգևոր առաջնորդների լուծելու խնդիրն է, հակամարտության արժանաներն ավելի շատ քաղաքական, ազգային, պատմական և իրավական են, սակայն, հաշվի առնելով բոլոր ժամանակներում կրոնական գործոնի չնվազող ազդեցությունը մարդկային կյանքի տարբեր դորոտների վրա, միանգամայն տրամաբանական և անգամ կենսական նշանակության անհրաժեշտություն է դառնում կրոնական առաջնորդների ներգրավվածությունը խնդրի լուծմանն ուղղված ջանքերում:

Դեռևս 1988թ. փետրվարի 25-ին երջանկահիշատակ Վագգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը հեռուստատեսությամբ դիմեց հայ ժողովրդին՝ հորդորելով չկորցնել հավասարակշռվածությունն ու զավածությունը և ընթանալ օրինական ու խաղաղ միջոցներով արցախահայության արդար պահանջը լուծելու ձանապարհով: Նոյն օրը Վեհակառը նաև մի բովանդակալից հեռագիր էր հելլ. Ս. Գորբաչովին՝ համայն հայության անունից արտահայտելով իր մտահոգությունը և խնդրելով ծերնարկել միջոցներ, որպեսզի «արդարացի լուծում ստանա Հայկական Դարարադի հարցը՝ համաձայն Սահմանադրության և համաձայն Դարարադի ժողովրդական դեպուտատների սովետի որոշման ու դեմոկրատիայի սկզբունքների: Սակայն, ցավոք սրտի, ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների կողմից չեն ծերնարկել լուրջ քայլեր՝ գործընթացը խաղաղ և օրինական ձանապարհի վրա պահելու, և մի քանի օր անց հետևում է սումգայիթյան ոճրագործությունը: Արյունավի այդ իրադարձությունից հետո՝ մարտի 12-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Կովկասի մահմենականների վարչության նախագահ Շեհյու-ուլ-իզամ Ալահշություր Փաշազադի երկու պատվիրակներ, ովքեր Հայոց Հայրապետին փոխանցեցին Աղրբեջանի հոգևոր առաջնորդի ցավակցական ուղերձը տեղի ունեցած ողբերգության վերաբերյալ: Սա երկու կրոնապետների միջև երկխոսության և համագործակցության յուրօրինակ սկիզբ է դառնում՝ հակամարտությանը խաղաղ միջոցներով լուծում փնտերելու ուղղությամբ[4]:

Սումգայիթյան ողբերգությունից հետո Հայ Արաքելական Եկեղեցու ջանքերով արցախյան հարցը հայտնվում է քրիստոնեական այլ Եկեղեցների, միջազգային կրոնական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: 1988թ. մայիսի 4-ին Ռուսական ժողովում տեղի է ունենում Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետների ժողովը, որն ավարտվում է համատեղ ուղերձով, որով քրիստոնյա և մահմենական կրոնապետները սիրո, եղբայրության ու խաղաղության կոչ էին անում իրենց հավատացյաներին[5]:

## ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

1991թ. Վազգեն Ա կաթողիկոսը կրկին դիմում է Մ. Գորբաչովին՝ խնդրելով կանխել արյունահեղությունները: Միաժամանակ Վեհափառ Հայրապետն առանձին նամակ է հղում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նախագահ Էմիլիո Կաստրոյին, որին հետևում է այդ օրերին Կամբերայում ընթացող ԵՀԽ հերթական համաժողովի հայտարարությունը, որը խորհրդային ղեկավարներից պահանջում էր պաշտպանել հայերի կրոնական, մշակութային և ազգային շահերը, ինչպես նաև հակամարտության տարածքի բոլոր բնակչների մարդկային իրավունքները: ԽՍՀՄ ղեկավարին են դիմում նաև Երուսաղեմի Եկեղեցիների հոգևոր պետերը, իսկ Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոն արք. Մանուկյանը Արցախում վերսկսված հակահայկական գործողությունների արիթրով հանդես է գալիս մամուլում: Հաջորդ տարի Արցախի խնդիրը հատուկ քննության նյութ է դառնում նաև Պրահայում գումարված Եկեղեցիների Կոնֆերանսի նիստում[6]:

ԵՀԽ-ն և ԵԵԿ-ն դառնում են երկու հոգևոր պետերի երկրորդ համդիպման միջնորդն ու նախաձեռնողը: Բանակցությունների պատասխանատվությունն իրենց վրա են վերցնում ԵՀԽ նորընտիր քարտուղար Կոնրադ Ռայգերն ու ԵԵԿ ընդհանուր քարտուղար Ժան Ֆիշերը: 1993թ. փետրվարին Շվեյցարիայի Մոնտրեյ քաղաքում կայացած հանդիպումն առանձնակի նշանակություն ունեցավ. Երկու կրոնապետերը համատեղ հայտարարությամբ մեկ անգամ ևս հաստատեցին, որ հակամարտությունը չունի կրոնական շարժարիթ: Այնուհետև հայ և աղրեջանցի հոգևոր առաջնորդների միջև շփումներն ու համագործակցությունը շարունակելու միջնորդական առաջելությունը հիմնականում ստածնում է Ռուս Ուղղափառ Եկեղեցին: 1994թ. Վազգեն Ա կաթողիկոսը և Ալլահյություր Փաշազադեն Ալեքսի Բ պատրիարքի առաջարկով դիմեցին հակամարտող կողմերին՝ կոչ ամելով անհապաղ դադարեցնել արյունահեղությունը: Մասնավորապես, ի պատասխան ռուս պատրիարքի այս առաջարկի, Վազգեն Վեհափառ նման կոչով նամակներ է հղել <<Արցախի և Աղրեջանի իշխանություններին[7]:

Հաջորդ հանդիպումն արդեն Գարեգին Ա կաթողիկոսի և Ալլահյություր Փաշազադի միջև էր, որը կայացավ Սուկվայում 1995թ. ամռանը, Ալեքսի Բ-ի նախաձեռնությամբ: Շուակողմ հանդիպման արյունքում հայ, ռուս և աղրեջանցի կրոնապետերը կրկին ստորագրեցին մի հայտարարություն, որը ևս մեկ անգամ հաստատում էր այն, որ հայ-աղրեջանական հակամարտությունը գորև է կրոնական հիմքից: 1995թ. համդիպման ընթացքում երեք կրոնապետերը հանդես եկան նաև խաղաղարար Կոնֆերանս հրավիրելու նախաձեռնությամբ: Այդ շրջանում, երբ արդեն իրադրությունը փոքրինչ կայունացել էր, հանդիպման մասնակիցները կարևորեցին փախստականների, ինչպես նաև գերիների ու պատանդների խնդրի լուծումը՝ իբրև խաղաղության հաստատման կարևոր պայման, և հակամարտող կողմերին կոչ արեցին ազատ արձակել մինչև վերջին գերյալթ[8]:

Աղրեջանի հոգևոր առաջնորդի հետ հանդիպումներն ու երկխոսությունը նոր թափով շարունակվեցին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք՝ որպակական նոր աստիճանների բարձրանալով: 2000 թվականից ի վեր երկու կրոնապետերի միջև տեղի ունեցան մի շարք կարևոր հանդիպումներ, ծեռք բերվեցին նոր պայմանավորվածություններ և հնչեցին պատմական հայտարարություններ, սակայն այդ հանդիպումներից առաջնապես կարևորվեցին վերջին երկուսը:

Նախ՝ 2010 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցավ աննախադեպ իրադարձություն, արցախյան հակամարտության 22 տարիների ընթացքում առաջին անգամ հայկական պատվիրակության ինքնաթիրոր հատեց հայ-աղրեջանական սահմանը և Երևանից մեկնեց Բաքու՝ այնտեղ տանելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու նրա շքախմբին:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Գարեգին Բ կաթողիկոսը Ալահյուքուր Փաշազադեի հրավերով մեկնեց Աղրբեջանի մայրաքաղաք՝ մասնակցելու ապրիլի 26-27-ը Բաքվում գումարված Կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովին: Գագաթնաժողովի ժամանակ իր խոսքում Վեհափառ Հայրապետը մեծապես կարևորեց արցախյան խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված բոլոր ջանքերը. Գագաթնաժողովի շրջանակմերում Գարեգին Բ կաթողիկոսի, Վիրիլ Ա պատրիարքի և շնիւռվաճակ Ալահյուքուր Փաշազադեի միջև տեղի ունեցավ եռակողմ հանդիպում, որի արդյունքում ընդունվեց համատեղ հայտարարություն, որով հոգևոր առաջնորդները վերահաստատեցին հակամարտությունը խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու անհրաժեշտությունը և կրկին հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ շարունակելու իրենց ջանքերն այդ ուղղությամբ: Հոգևոր առաջնորդները կարևորում էին փախստականների վերադարձն իրենց բնակավայրերը, գերիների ազատ արձակումը, վանդալիզմի դատապարտումն ու կրոնական հուշարձանների և սրբությունների պահպանումը և այլն[9]: Բաքվում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ նաև Աղրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ, ով նույնական ողջունեց հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը՝ դրանցում կարևոր համարելով կրոնապետերի և հոգևոր սպասավորների դերը:

Այսուհետև 2011թ. նոյեմբերի 28-ին, Փաշազադեն պահպանեց Գարեգին Բ-ի կողմից հաստատված նշանողը և Հայոց Հայրապետի հրավերով ժամանեց Երևան՝ մասնակցելու ԱՊՀ միջկորոնական խորհրդի նախագահության նիստին: Նիստից հետո տեղի ունեցավ պամանական դարձած եռակողմ հանդիպում՝ հայ, աղրբեջանցի և ռուս կրոնապետերի միջև: Հոգևոր առաջնորդների հանդիպումը բազմից ընդգծվել և ամենաբարձր մակարդակով հայտարարվել է, որ հակամարտությունը բացարձակապես չունի կրոնական հիմքեր, ինչը խիստ կարևոր էր արցախահայության պայքարի բնույթի աղավաղման և հակամարտությանը կրոնական կեղծ երանգ հաղորդելու միջոցով շահարկումներ կատարելու աղրբեջանական տիրահօչակ քաղաքականությունը որոշակիորեն կանխարգելելու տեսակետից: Զի կարելի թերագնահատել նաև հոգևոր առաջնորդների պատուական հայտարարությունների դերը, որոնք, կրելով դեկարտիկ բնույթ, սրակիության ու զապածության էին կոչում հակամարտող կողմերին՝ իրենց հոգևոր համայնքներին ուղղորդելով երկնոտության և խաղաղ բանակցությունների: Հոգևոր առաջնորդները որոշակի հաջողություններ արձանագրեցին նաև գերիների ազատ արձակման, զոհվածների մարմինների փոխանակման և այլ հարցերում՝ փորձելով փոքր-ինչ բոլոր ռազմական գործողությունների վերքերը[10]:

Մուկվայում կայացած հոգևոր առաջնորդների հանդիպումից առաջ կանխատեսում էին, որ տրամաբանական չի լինի կարծել, որ հոգևոր առաջնորդների հանդիպումից հետո Արցախյան հակամարտության լուժման լուրջ առաջնաղացում է տեղի ունենալու, սակայն այս հանդիպումը կարող էր որոշակի փոփոխություններ բերել հարային քննարկումներում, պատկերացումներում ու կարծրատիպերում, ստեղծել խաղաղ, կողմնորոշող ու կայուն մթնոլորտ սեփական հասարակության, ժողովրդի շրջանում: Խաղաղության պահպանական խնդրին այսօր հրամայական է, քանզի տարածաշրջանում այն շատ խոցելի վիճակում է գտնվում սահմանային միջադեպերի, հրադադարի ռեժիմի խախտումների պատճառով, որը սակայն մեծամասամբ հրահրում է աղրբեջանական կողմը: Ուստի այս հանդիպումը կարող էր ունենալ արդյունք այն առումով, որ հոգևոր առաջնորդները կարող են օգտագործել սեփական հեղինակությունը հակամարտության խաղաղ կարգավորման համատեքստում հարային մթնոլորտ ստեղծելու առումով: Որպես օրինակ Հռոմի Պապն ամեն առիթ օգտագործում է Սիրիայում պատերազմը դադարեցնելու կոչեր անելու համար: Այս հրադադությունը կա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

րող է արձանագրել նաև այն փաստը, որ կրոնական ճանապարհով կարելի է երկխոսությամ մեջ գնալ մի երկրի հետ, որի հետ ոչ միայն չկան դիվանագիտական հարաբերություններ, այլև առկա է չյուծված հակամարտություններ:

2017թ. սեպտեմբերի 8-ին Սոսկվայում՝ Ս. Ղանիելի պատրիարքամիստ վաճրում Սոսկվայի և Համայն Ոուսիի Կիրի Պատրիարքի հրավերով կայացավ Աղրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի հոգևոր առաջնորդների հանդիպությունը: Հոգևոր առաջնորդները հանդես եկան առանձին ելույթներով, չանդրադառնալով մանրամասներին՝ կցանկանայինք ուշադրություն դարձնել որոշ առանձնահակատվությունների և շեշտադրումների վրա: Տարածաշրջանի հոգևոր առաջնորդները հանդես եկան համատեղ հայտարարությամբ: Արդեն նշել էինք, որ հոգևոր առաջնորդները կարող են օգտագործել սեփական հեղինակությունը հակամարտության խաղաղ կարգավորման համատեքստում հանրային մթնոլորտ ստեղծելու առումով, Հայոց Հայրապետությունը իր խոսքն սկսեց խաղաղության մասին նախադասությամբ, և որ հոգևոր առաջնորդների գիշավոր նպատակը պետք է լինի նպաստել Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման ընթացքին: Վեհափառն իր խոսքում շեշտեց, որ, չնայած բանակցող կողմերի, միջազգային հանրության հմչեցրած կոչերին՝ խաղաղություն հաստատել տարածաշրջանում և չարել ռազմական ագրեսիան, այնուամենայնիվ սահմանային միջադեպերը շարունակվում են, Վեհափառն առանձնակի անդրադարձավ նաև 2016թ. ապրիլյան իրադարձություններին, բայց էության, Հայաստանի հոգևոր առաջնորդի այս խոսքում կար կարևոր ենթատեքստ, համաձայն որի, հիմնականում ռազմական գործողություն իրահորոց կողմն Աղրբեջանն է, հակառակ դեպքում այդքան վստահությամբ ելույթի մեջ չէր շեշտի ապրիլյան վայրագություն, բռնություն, խոշտանգում, կորուստ, ավեր և այլ բառերը[12]:

Վեհափառն իր խոսքի մեջ շեշտեց՝ մեր տարածաշրջանում խաղաղությունն այլընտրանք չունի, ինչպես և՝ դարարադայան հակամարտության կարգավորությունը՝ բացառապես բանակցությունների միջոցով: Այլընտրանք չունի նաև Արցախի մեր հավատավոր ժողովորդի ազատ և անկախ կյանքը: Վեհափառը խոսքի մեջ խաղաղության կոչ արեց, կոչ արեց ծևավորել հանդուժողականության և խաղաղության մթնոլորտ: Ինչպես արդեն նկատեցիք, Վեհափառ Տիրոջ խոսքն ուղիղ էր և հասցեական՝ բոլոր կետերի առնչությամբ[13]:

Ըստ էության, ինչ վերաբերում է Աղրբեջանի հոգևոր առաջնորդի հմչեցրած ելույթին, ապա այն խաղաղության տեսական ու հոգևոր տեքստ էր՝ արանց առանձնակի անդրադարձների շեշտադրությունների: Մեջբերում ենք մի փոքր հատված: «Հայ և աղրբեջանցի ժողովուրդները մշտապես ապրելու են կողք կողքի, այդ իսկ պատճառով չկա այլընտրանք, քան խաղաղությունն ու համագործակցությունը: Բազմաթիվ մարտահրավերների առջև մեր ժողովուրդների հոգևոր առաջնորդներս, պարտավոր ենք փնտորել համատեղ պատասխաններ: Մեր համայնքների բոլոր զավակներին ուղղում ենք ինչպես խաղաղության, բարորության և բարի ծերնարկումներում հաջողությունների բարեմաղթանքներ» [14]: Ընդհանուր առնամբ, ուսումնասիրելով հոգևոր առաջնորդների հանդիպություններն ամենատարբեր պատմական ժամանակահատվածներում և իրավիճակներում, ինչպես նաև անդրադառնալով կրոնական գործոնին, կատարել ենք հետևյալ եղակացությունները.

➤ Արցախյան կոնֆլիկտի տարբեր փուլերում Աղրբեջանը բազմից փորձել է հակամարտությանը տալ կրոնական իմաստ, իլամական աշխարհի ուշադրությունը վերջինիս վրա գրավելու համար, սակայն հայ իրականության շրջանակ-

## ՄԵՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Աերում երբեք էլ Արցախյան հակամարտությունը չի ընկալվել որպես կրոնական հակամարտություն:

- Քաղաքական ենթատերսում, կամ էլ Արցախյան հիմնահարցին վերաբերվող քննարկումներում հոգևոր առաջնորդների դիմուլուսն ու հանդիպումները նոր մշակույթ չեն, դրանք ունեն որոշակի պատմական ընթացք և օրինաչփություններ, ուստի հետաքրքրական է այն փաստը, որ հոգևոր դաշտում քննարկում են հարաբերություններ այնպիսի երկրների միջև, որոնք ունեն ռազմական բախում և չունեն դիվանագիտական հարաբերություններ:
- Ողջամիտ չի լինի կարծել, որ հոգևոր հիմքերի վրա չխարսխված այս հակամարտությունը հոգևոր առաջնորդների լուծելու խնդիրն է, հակամարտության արմատներն ավելի շատ քաղաքական, ազգային, պատմական և իրավական են, սակայն, հաշվի առնելով բոլոր ժամանակներում կրոնական գործոնի չնվազող ազդեցությունը մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա, միանգամայն տրամարանական և անգամ կենսական նշանակության անհրաժեշտություն է դառնում կրոնական առաջնորդների ներգրավվածությունը խնդրի լուծմանն ուղղված ջանքերում:
- Հոգևոր առաջնորդների հանդիպման գիխավոր արդյունքը կտարածվի նախ և առաջ հասարակությունների շրջանում, որտեղ նրանք կարող են տարածել իդենց խաղաղության ու համերաշխության կոչերը:
- Վերջին հանդիպումն ուներ ընդգծված ենթատերստ միջազգային հանրությանն ուղղված հաղորդագրության տեսանկյունից, որ ագրեսորի դերում հանդես է գալիս Աղրբեջանը, սակայն միջազգային հանրությունը խաղաղության հորդումներ է հղում երկու կողմերին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տերտերյան Գ., Հոգևոր-կրոնական գործոնի ներք քաղաքական դաշտում [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2468](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2468)
2. "Radical Islam in the Former Soviet Union" Galina M. Yemelianova, 2009 p. 88:
3. Armenian, Azeri Religious Leaders Set To Meet In Moscow, <https://www.azatutyun.am/a/28708295.html>
4. Ամիրյան Ս., Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը եվ խորհրդային իշխանությունները, Եր., 2014 [http://hpj.asj-oa.am/2526/1/2008-2\(39\).pdf](http://hpj.asj-oa.am/2526/1/2008-2(39).pdf)
5. Նոյն տեղում:
6. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, գլխ. Խմբ. Հովհ. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Եր., 2002, էջ 946-948:
7. Հակիմ Պատմություն և Բացատրություն Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2012, էջ 43:
8. Հայաստանի, Աղրբեջանի և Ռուսաստանի հոգևոր առաջնորդները ԼՂ խնդրի վերաբերյալ հայտարարություն են ընդունել: <https://www.civilnet.am/news/2017/09/09/>
9. Նոյն տեղում:
10. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բարձում հայտարարել է, որ ԼՂ հարցի վերջնական կարգավորումը պետք է ընթանա խաղաղ ուղիով <https://www.panorama.am/am/news/2010/04/26/Garegin-b/1117855>

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018**

- 11.ԱՊՀ Միջխորհրդարանական խորհրդի նիստը Երևանում  
<https://armenpress.am/arm/news/669872/>
- 12.Armenian, Azeri Religious Leaders Set To Meet In Moscow,  
<https://www.azatutyun.am/a/28708295.html>
- 13.Նույն տեղում:
- 14.Նույն տեղում:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Հոգևոր առաջնորդների հանդիպումներն ու կրոնական գործոնը արցախյան  
հակամարտության համատեքստում  
Սիրանուշ Մելիքյան**

Արդի ժամանակաշրջանի Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների նոր իրողություն է Հայաստանի և Ադրբեյջանի հոգևոր առաջնորդների երկխոսությունը Ռուսաստանի հոգևոր առաջնորդի գլխավորությամբ, այն դեպքում, երբ առկա է լարվածություն, ռազմական բախում, չկան դիվանագիտական հարաբերություններ: Այս հանդիպումները ոչ միայն հետաքրքրական են, այլև օգտակար և հետաքրքիր ներքին ու միջազգային քաղաքացիական հանրույթի մթնոլորտի վրա ազդելու տեսանկյունից:

### **РЕЗЮМЕ**

**Встречи религиозных лидеров и религиозный фактор в контексте арцахского конфликта  
Сирануш Меликян**

**Ключевые слова:** конфликт, духовный лидер, религиозный фактор, общественная реальность, мирное сосуществование, духовная безопасность, международное сообщество.

Диалог духовных лидеров Армении и Азербайджана под руководством духовного лидера России – новая реальность в церковно-государственных отношениях современности в условиях наличия напряженности, военного конфликта и отсутствия дипломатических отношений. Эти встречи не только интересны, но и полезны с точки зрения влияния на внутреннюю жизнь и атмосферу международного гражданского сообщества.

### **SUMMARY**

**Meetings of religious leaders and the religious factor in the context of the Artsakh conflict  
Siranush Melikyan**

**Keywords:** conflict, religious leader, religious factor, public atmosphere, peaceful coexistence, spiritual security, international community

The dialogue between the religious leader of Armenia and the religious leader of Azerbaijan under the leadership of the religious leader of Russia is a new reality in modern relationship between church and state in the framework of current tension, military conflict and the lack of diplomatic relations. These meetings are not only interesting, but also useful in terms of the influence on the internal life and atmosphere of the international civil community.